

ղականերէ, ինչպէս էին յունականք իսկ: Փաւստոսի այն խօսքը՝ թէ Շապուհ «ես նկարել զտաշտ՝ ի պատկեր զՄուշեղ ձերմական» (190), յայտնինշան է՝ թէ պատմըչիս լաւ ծանօթ էին այդպիսի նկարէն անօթներ, զոր զուցէ Պարսկաստանէն աւելի Հայաստանի մէջ կը տեսնէր նա:

Բ. - Նուազ հետաքրքրական չեն նաեւ այն ամաններն ու սպասներ, որոնք Հայաստանեայց նախապատմական համարուած գերեզմաններէն կը հանուին՝ ջանիւք հայ եւ օտարազգի հնախուզից: Ասոնց ձեւերու կարեւոր հաւաքածոյ մը հրատարակեց Մորզան՝ իւր աշխատութեան մէջ (Ա, 142-57): Միաբանակիցս Հ. Գար. Վ. Նահապետեան՝ Բազմավէպի մէջ (ԾԵ, 89) ծանօթացուց նոյնպէս իւր պեղած գերեզմանի մ'անօթոց ձեւերը: Սակայն եւ ոչ այդ ատաղձը կը ծառայէ մեզ՝ Արշակունեաց կամ միջին շրջանի ուսումնասիրութեան համար, թէեւ հեռաւոր աղերս մը տեսնուի ազոնց ու մեր նկարագրութեանց մէջ: Պտուղը ժամանակով պիտի հասնի: